Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Նոնա Բուդոյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Քենիայի Հանրապետություն՝ 2023 թվականի 25-ից 28-ը հուլիսի.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Միավորված ազգերի կազմակերպության կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի քարտուղարություն

   **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցություն Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի հիսունիններորդ նստաշրջանին:

   ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբը (ԿՓՓՄԽ /IPCC) հիմնադրվել է 1988 թվականին: ԿՓՓՄԽ-ն ուսումնասիրություններ չի կատարում, այլ ամփոփում է համաշխարհային գիտական գրականությունը և հրատարակում գիտական հաշվետվություններ, որոնք համարվում են կլիմայի փոփոխության մասին գոյություն ունեցող ամենալավագույն և վստահելի աղբյուրը: ԿՓՓՄԽ-ին անդամակցում է 195 երկիր:

   ԿՓՄԽ-ը ունի երեք աշխատանքային խումբ:

   -առաջին աշխատանքային խումբը կենտրոնանում է կլիմայի փոփոխության բնագիտական ասպեկտներին,

   -երկրորդը՝ կլիմայական ազդեցություններին, կլիմայի փոփոխության հարմարվողականության և խոցելիության հարցերին,

   -երրորդը՝ կլիմայի փոփոխության մեղմման խնդիրներին:

   Ունի նաև հատուկ աշխատանքային խումբ՝ ջերմոցային գազերի գույքագրման մեթոդոլոգիա մշակելու համար:

   5 տարին մեկ հրապարակում է գնահատման զեկույցներ կլիմայի փոփոխության ոլորտում գիտական ուսումնասիրությունների վիճակի մասին: 2023 թվականի մարտին հրատարակվել է 6-րդ գնահատման զեկույցը:

տեղի համար դիմել էր 7 երկիր՝ (Թուրքիա, Ռուսաստան, Իտալիա, Ադրբեջան, Դանիա, Իսպանիա, Հայաստան): Հայաստանի օգտին չէր քվեարկել ոչ մի երկիր, չնայած տեղում և ԱԳՆ կողմից նախնական փոխանակման պայմանավորվածությունների:
Պատվիրակության ղեկավարները քվեարկում էին բացառապես իրենց արտաքին գործերի նախարարության կամ ոլորտի ղեկավարի հետ նախապես համաձայնեցված ցուցակներով: (կից ներկայացվում է ՀՀ ԱԳՆ դիրքորոշումը՝ 2 նիշք):

**7.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

ԿՓՓՄԽ Նախագահ ընտրվեց Անգլիայի ներկայացուցիչ Ջիմ Սկինը: Քվերակության վերաբերյալ առավել մանրամասն՝ կից հղումով՝ https://www.ipcc.ch/2023/07/28/ipcc-wraps-up-elections-in-nairobi/ :

*Գործուղվող* *Նոնա Բուդոյան*

*02.08.2023*